



ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 3, Փետրուար 2026



ԱՆՐԱԴԱՐՁ ԵՒ ՈՒՂԵԴՐՁ՝ ԱՊԱՇԽԱՐԻՈՒԹԵԱՄԲ

Ղուկաս Աւետարանին ընդմէջէն մեր Տիրոջ ծայնն է որ կը լսենք. «Եթէ չապաշխարէք, բոլորդ ալ նոյնպէս պիտի կորսուիք» (Ղուկ. 13.2-5):

Այսօր երբ «Ապաշխարել» բառը կը լսենք կը վախնանք, երբեմն նոյնիսկ կը վիրաւորուինք երբ լսենք որ պէտք է ապաշխարես, կարծելով որ միայն հոգեւորները պէտք է ապաշխարեն: Բնականաբար ո՛չ սիրելիներ, ապաշխարութիւնը փակ դուռ եւ կամ պատնէշ քաշուած սենեակ չ'առաջնորդէր մեզ, մի՛ վախնանք, ընդհակառակը դէպի ազատութիւն կ'առաջնորդէ:

Յիսուս կը բացատրէ մեզի «Ով որ մեղք կը գործէ՝ ծառայ է մեղքին» (Յովհ. 8.34): Հետեւաբար, երբ Աստուած մեզ ապաշխարութեան կը հրաւիրէ, մեղքի ստրկութենէն կ'ուզէ ազատագրել մեզ եւ ազատութիւն շնորհել: Ապաշխարութեան ճամբով եւ մնայուն ընթացքով է որ միայն կարելի կ'ըլլայ թարմանալ եւ նորոգուիլ: Այնպէս ինչպէս Պետրոս առաքեալ կը հաստատէ. «Ապաշխարեցէք եւ Աստուծոյ դարձէք, որպէսզի ձեր մեղքերը ջնջէ, առիթ տայ որ վերանորոգուիք» (Գործք 3.19-20):

Եկէք անկեղծ ըլլանք, երբեմն չենք մտածեր որ Աստուած մեզ կը փորձէ, մեզ կը պատժէ: Յաճախ կը փորձենք Աստուծոյ վրայ բարդել մեր կեանքի սխալները, տկարութիւնը, անյաջողութիւնը, անտարբերութիւնը եւ կամ անհաւատութիւնը առանց քննելու մեր ներսիդին, մեր սիրտը: Սակայն, Աստուածաշունչը մեզի կը սորվեցնէ. Որ Աստուած ո՛չ կը պատժէ, ո՛չ կը փորձէ: Մեղքն է որ կը կործանէ մեզ, ոչ թէ փորձանքը: Երբ կը խախտենք բնութեան օրէնքները, բնականաբար կը կրենք նաեւ անոր հետեւանքը: Աստուած միշտ՝ սիրող Հայր է, կը սորվեցնէ, կ'օգնէ, կը զգուշացնէ եւ կը հրաւիրէ: Իր հրաւերը յստակ եւ պարզ է. «Եթէ չապաշխարէք, բոլորդ ալ նոյնպէս պիտի կորսուիք» (Ղուկ. 13.2-5):

Հետեւաբար ապաշխարութիւնը մնայուն ընթացք է եւ պէտք է դառնայ: Յաճախ վերադարձի ճամբան կը մոռնանք եւ կամ կը վախնանք տուն դարձի ճամբան բռնելու, կարծելով որ մեր Հայրը պիտի պատժէ մեզ: Ո՛չ սիրելիներ, Աստուած պատժող դատաւոր չէ, ընդհակառակը երբ վերադառնանք եւ կանգնինք Իր առջեւ եւ «Հայր, մեղանչած եմ» ըսենք, մեզ միայն ողորմած Հօր բաց գիրկն է որ կը սպասէ:

Եկէք ապաշխարենք՝ չկորսուելու համար:

Հաւատքով ուղեդարձ կատարենք վերաթարմանալու, վերագործանալու եւ ճաշակելու Աստուծոյ ողորմութիւնը: Թող Քրիստոսի խօսքը իրականանայ մեր կեանքին մէջ. «Աստուծոյ ըսի ձեզի, որպէսզի իմ ուրախութիւնս ձեր մէջ ըլլայ եւ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ» (Յովհ. 15.10-11):

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Ամէն ինչ կարելի է անոր համար՝ որ կը հաւատայ» (Մարկոս 9.23): Յիսուս Քրիստոսի այս խօսքը վստահութիւն ու հաւատք ներշնչող զօրութիւն ունի իր մէջ:

Մեր ամէնօրեայ կեանքի ընթացքին կ'ապրինք պահեր, երբ կասկածը, վախը, անյուստութիւնը կը պատեն մեզ եւ կը սկսինք ելք մը փնտռել: Կը սկսինք մենք մեզի խորհիլ. «այլեւ ուժ չունիմ», «ճանապարհը փակ է», «լուծում չեմ տեսներ»:

Ճիշտ այդ ժամանակ, Յիսուս Քրիստոս կը քաջալերէ մեզ ըսելով. «Ամէն ինչ կարելի է անոր համար՝ որ կը հաւատայ» (Մարկոս 9.23):

Հաւատքը միայն համոզում չէ, այլ կենդանի յարաբերութիւն Աստուծոյ հետ: Հաւատքը՝ վստահութիւն է Աստուծոյ հանդէպ, այն ժամանակ երբ ամէն բան մեզի համար անորոշ կ'երեւի: Հաւատալ կը նշանակէ մեր սիրտը բանալ Աստուծոյ կամքին դիմաց: Երբ մարդ արարած կը սկսի հաւատալ, իր կեանքը կը դնէ Աստուծոյ ամենակարող ձեռքերուն մէջ:

Հաւատացողին համար ամէն բան կարելի է, որովհետեւ ան իր յոյսը չէ դրած իր սեփական ուժին վրայ, այլ Աստուծոյ ամենակարողութեան վրայ: Աստուծոյ հանդէպ մեր ունեցած հաւատքն է, որ կը լուսատրէ մեր կեանքը, կ'այլափոխէ մեզ, մեր կեանքերուն մէջ հրաշքներ կը գործէ:

«Ամէն ինչ կարելի է անոր համար՝ որ կը հաւատայ» (Մարկոս 9.23):

Այսօր շատեր դժուարութիւններու մէջ են, շատեր մարտահրաւերներէ կ'անցնին, ուրիշներ փորձութեանց դէմ կը պայքարին, շատեր հարցադրումներու շարքերուն մէջ կը կորսուին, ամէն մէկ անձ իր չափով ծանրաբեռնուած է: Քրիստոս Յիսուսի այս խօսքը մեզի կը յիշեցնէ, որ Աստուած ներկայ է միշտ: Ան մեր կողքին է: Կը լսէ մեր աղօթքները ու կը տեսնէ մեր արցունքները: Վստահինք Տիրոջ, հաւատանք Անոր ամենակարողութեան, ըսենք. «Կը հաւատամ, Տէր» եւ կը տեսնենք, թէ ինչպէս Աստուած մեր դիմաց փակուած դռները կը բանայ, մեր կեանքի փոթորկած ալիքները կը խաղաղեցնէ եւ մեզ կը վերանորոգէ:

Ամէն բան կարելի է հաւատացողին համար, որովհետեւ հաւատքը այն բանալին է, որ կը բանայ այն դռները, որ մեր վախկոտութեան, կասկածամտութեան, անյուստութեան եւ մարտահրաւերներուն պատճառով փակուած էին մեր դիմաց:

Աբրահամ հաւատաց Աստուծոյ խոստումին, ձգեց իր երկիրը եւ հետեւեցաւ Աստուծոյ ծրագրին եւ դարձաւ «հաւատքի հայր» ու իր հաւատքով օրհնութիւն դարձաւ բազմաթիւ ազգերու համար:

Մովսէս հաւատաց Աստուծոյ կանչին՝ անապատէն Եգիպտոս վերադարձաւ: Վախկոտ հովիւը դարձաւ ամբողջ ժողովուրդի մը առաջնորդը:

Դաւիթ հաւատքով ելաւ Գողիաթի դիմաց եւ այդ հաւատքը ապահովեց յաղթանակը: Հովիւը դարձաւ թագաւոր եւ արժանացաւ՝ «Աստուծոյ սրտին հաճելի մարդ մը» կոչումին:

Պօղոս Առաքեալ հաւատաց Յարուցեալ Քրիստոսին եւ մեծ հալածիչը դարձաւ մեծ առաքեալ եւ Աւետարանի քարոզիչ:

Արիմահոս կինը հաւատքով մօտեցաւ ու դպաւ Յիսուսի զգեստի քղացնքին եւ իսկոյն բժշկուեցաւ:

Դուն ալ հաւատա՛մ եւ կը տեսնես Աստուած ինչպիսի հրաշք կը գործէ կեանքիդ մէջ:

Միայն հաւատա՛մ:
Հաւատքը փրկութիւն է:

Հայր Յակոբ

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

«Արթուն եղէք, հաստատուն մնացէք ձեր հաւատքին վրայ. քաջ եղէք, զօրացէք: Ինչ որ կ'ընէք սիրով ըրէք» (Ա. Կորնթացիս 16:13-14):

“ Be on your guard; stand firm in the faith; be courageous; be strong. Do everything in love.” (1 Corinthians 16:13-14)





ԱՂՕԹՔ ՎԱՍՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՒՈՅ

Տէր, պահէ՛ Տունը հրաշակերտ, ոյր կառուցքին կազմն ու ծիր Փողփողենէջ լոյսին շողովը դուն ինքնին գրծեցիր, Ու կամեցար որ փոքրիկ Հօտըդ զայն ընէ ապաստան Խարխլած կեանքին իր եւ հոգոյն՝ իբրեւ Տապան փրկութեան: Փութա՛մ, հասի՛ր, այցելութեան ժամ է արդ, Տէր ապաւեն, Տեսն վիշտն ու մահ, աղէտքն ու չարն ինչպէս իր դէմ կը դաւեն:

Փըրթած՝ ժայռէն ան իր հիմքին, զերդ հողմակոծ նաւ մը մութ՝ Մերթ լոյծ լերանց բարձրերը, մերթ դէպի անդունդ խորամուտ, Յասկոտ ու խօլ կոհակներուն մէջ կը ծեծուի տարուբեր, Մինչ հըզօրները ափունքէն զայն կը դիտեն անտարբեր: Կարկառէ՛ աջըդ, Տէր, փըրկէ՛ զայն խութերէ, հէնտերէ, Թող խաչանիշ խարխիսիդ տեսքը իր մէջ Յոյսըդ հրահրէ:

Հրանջք. չէ խըռուած դեռ անոր կայմը իր կայքէն ամրակուռ, Չէ պատըռուած առագաստին դեռ թըռչարանը մաքուր, Չեն յօշոտուած կապարանները հաստապինդ զիստերուն, Չի դեռ դեկին դամպարն, Հաւատքը, կը հեայ մէջն անքուն: Բայց կը գոռայ մըրրիկն իր շուրջ, մռայլն է պատեր իր չորս դին: Խաղաղութեան Տէր, շինչըդ լոկ կըրնայ սաստել անդուդին:

Խարակներ թուխ՝ զերդ գազաններ յուշկապարիկ, փըրփրազայր Յորձանքներէն յանկարծ ցըցած դուրս գլուխներնին բազմասայր, Կը մըղձկոտեն սիրտերն անոնց որ հոն մըթնած երկնից տակ Կը գալարուին գահանդանքովը վիհերուն անյատակ: Տէր սիրոյ՝ ոյր սըրտին ծնունդն է ամէն ինչ որ է բարի, Պիտի ներէն որ ողջ ազգի մ'հոգին այսպէս խաւարի:

Հրամայէ՛, եւ պիտի ալեաց կիրքերն աղի խաղաղին, Ու նաւն՝ յոյսիդ առասանով, պիտի գըտնէիր ուշին. Պատռէ՛ թըխպոտ ամպերուն դէզն որ կը ծածկէ հորիզոնն, Որ ան տեսնէ նոր գարունի մը փառքերուն ծաղկիլն հոն: Տէր զըթութեան, սիրտերն ամէն, թեւերն ամէն դէպի Քեզ եւ սեւեռուած, քաղցր ակնարկիդ ըսպասումովն ըղձակէզ:

Ազգ Հայոց, ազգ իմ սիրական, պահէ՛ Հաւատքդ, Յոյսդ ու Մէրն, Աստուածային Հոգոյն բըղխմունքն երրեակ այդ սուրբ, սերտ եւ սեռն. Պիտի կանգնի իր հիմունքէն սասանած Տունը նորէն, Պիտի բերկրին անոր ի տես դարձեալ սիրտերն համօրէն. Փըշրած չէ գահը. չէ կոտորած մականը սուրբ. ողջ ես դեռ. Սըրբէ՛ արցունքդ, հայէ՛ երկինք. ամպն է արդէն փարատեր:

ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ԳՈՒՇԱԿԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ՀՈՎԻՒԸ

«Ես եմ իրաւ հովիւը» (Յի 10.11,14):

Յիսուս իրաւ հովիւ է, որովհետեւ կը սիրէ քեզ: Իր գրկին մէջ, դուն ունիս յատուկ տեղ: Եկրոր եւ կշտացիր իր սիրով, եւ զինք կշտացուր սիրովդ: Եկրոր եւ վայելէ իր սէրը, եւ առիթ տուր, որ ինքն ալ վայելէ քու սէրդ:

Յիսուս իրաւ հովիւ է, որովհետեւ կը գուրգուրայ իր ոչխարներուն: Եթէ գուրգուրանք, կարեկցութիւն, հոգատարութիւն ու խնամք կը փնտռես՝ իրեն եկուր: Ան գուրգուրոտ ու կարեկցող Փրկիչ է, հոգատար ու խնամատար եղբայր է:

Յիսուս իրաւ հովիւ է, որովհետեւ վստահելի հովիւ է: Եթէ կը փնտռես մէկը որուն կարենաս վստահիլ ու վստահութեամբ սիրող բանալ, մէկը՝ որուն կարենաս ցափդ մասին խօսիլ ու բուժում գտնել, մէկը՝ որուն կարենաս պարզել մտահոգութիւններդ եւ լուծում ստանալ, եկրոր իրաւ հովիւին՝ Տէր Յիսուսին: Ան պատրաստ է քեզ լսելու: Բանց սիրող իր դիմաց: Պատմէ ցաւերուդ մասին Տիրոջ, որ քեզի համար շատ ցաւեր կրեց:

Յիսուս իրաւ հովիւ է, որովհետեւ կը հասկնայ քեզ: Եթէ կը փնտռես մէկը որ քեզ ճիշդ հասկնայ, եթէ կը փնտռես մէկը որ հասկնայ միտքդ ու մտքիդ մտահոգութիւնները, հասկնայ հոգիդ ու հոգիիդ երազները, հասկնայ սիրտդ ու սրտիդ տառապանքը, հասկնայ կեանքդ ու կեանքիդ դժուարութիւնները՝ իրեն եկուր: Ան քեզ ճիշդ կը հասկնայ, ամբողջապէս կը հասկնայ, որովհետեւ դուն իր ձեռքերուն գործն ես, իր կամքին սիրոյ պտուղն ես, իր կողմէ եւ իրեն համար ստեղծուած թանկագին անձ մըն ես:

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ
Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Առաւօտեան այս աղօթքը եւ բանաւոր պաշտամունքը ընդունէ՛, ամենակալ, ամենամեծ Աստուած, քու երկնային անապական խորանաւոր յարկերուն մէջ: Արդարութեան եւ իմաստութեան լոյսդ ծագեցրոր մեր վրայ, եւ մեզ լոյսի եւ ցերեկի որդիներ դարձուր, որպէսզի երբ օրը բացուի՝ երկիւղածութեամբ վարենք մեր կեանքը, եւ առանց գայթակղութեան իր կատարման հասցնենք, որովհետեւ դուն ես մեր օգնականն ու փրկիչը: Քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը. այժմ եւ յաւիտեան:

ԱՄԷՆ:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ՄԵԽԹԱՐՈՒԹԻՒՆԸ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Քու խաղաղութեամբդ, Հոգի՛ Սուրբ, Աստուած ճշմարիտ, որ վեր է ամէն մտքէ ու խորհուրդէ, մխիթարէ՛ մեզ՝ քու ծառաներդ, ընդունելով մեր աղաչանքը: Դուն՝ որ բարերար ես, ջնջէ՛ մեր յանցանքներուն արժանի ահաւոր պատիժը: Ներողամիտ եղիր եւ լսէ՛ մեզ, քաւէ՛ եւ ներէ՛ մեր մեղքերը: Արժանի ըրէ՛ գոհութեամբ փառաւորելու քեզ՝ Հօր եւ Միածին Որդիին հետ միասին. այժմ եւ յաւիտեան:

ԱՄԷՆ:

ՏՕՆ ՍՐԲՈՅ ՂԵՒՈՆԴԵԱՆՅ
ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ
ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ ԵՒ ԿԸ ՔԱՐՈՋԷ
ԳԵՐՇ. Տ. ԲԱՐԳԷՆ ԱՐՔ. ՉԱՐԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ
ՍՈՒՐԲ ԽՈՐԱՆԻՆ ԿԸ ՍՊԱՍԱՐԿԵՆ
ԹԵՄԻՍ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՅ ԴԱՍԸ
ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ
ԵՐԵՎԱՆԻ 10 ՓԵՏՐՈՒՄ
ԵՐԵՎԱՆԻ ԺԱՍԸ 7:00
ԴԻՒՆ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ





ՀԱՍՎԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ ՔՈՒՆ ՊԱՏԱՐԱԳ ԿԱՄ ՀԱՒԱՏԱՅԵԼՈՑ ՊԱՏԱՐԱԳ

Երբ եկեղեցիին մէջ կը մնան միայն հաղորդուելու ի վիճակի եղող հաւատացեալները, կը սկսի բուն Պատարագը, կամ Հաւատացեալներու Պատարագը:

ՄԱՐՄԻՆ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ

Այս բաժինը կը բացուի «Մարմին Տէրունական» երգով, եւ անոր հանդարտ, վեհ ու գեղեցիկ եղանակով: Իսկապէս երկնայիններուն վայել փառաբանութիւն մըն է՝ արձագանգը հրեշտակներու «Սուրբ, Սուրբ» փառաբանութեան, ինչպէս երգին բառերը մեզի կ'ըսեն:

Այս երգին կապակցութեամբ անմիջապէս պէտք է ըսենք, որ մեր ներկայ Պատարագին մէջ անիկա իր ճիշդ տեղը չէ: Կարգի խախտում մը կայ, որ դժբախտաբար նուիրականացած է արդէն: Այս երգը իրականին մէջ պէտք է Սրբասացութենէն ետք գայ, եւ ո՛չ թէ անկէ առաջ: Առաջին անգամ Լամբրոնացիին քով է, որ կը նշմարենք այդ խախտումը, մինչդեռ հնագոյն Պատարագամատոյցին մէջ անիկա Սրբասացութենէն ետքն է: Եւ տրամաբանութիւնն ալ անոր ճիշդ ըլլալը կը հաստատէ: Դուք դատեցէք. երբ տակաւին վերաբերումը չէ կատարուած, այսինքն՝ Հացն ու Գինին սուրբ սեղան չեն բերուած ու տակաւին ժողովուրդին ի տես չեն պարզուած, մենք կ'երգենք՝

«Տիրոջ Մարմինն է, Փրկչին Արիւնն է ահա դրուած մեր դիմաց:
Երկնային զօրքերը անդադար կ'երգեն՝ ըսելով.
“Սուրբ, Սուրբ, Սուրբ ես, Տէր Զօրութեանց”»:

Պարզ է չէ՞, որ սխալ բան մը կայ այստեղ: Մինչդեռ վերաբերումէն ետք, երբ Ընծաները Սեղան կը դրուին, շատ բնական կու գան վերոյիշեալ բառերը:

Հոս յիշենք նաեւ, որ պատարագին մէջ Անծեացիէն ետք եղած յաւելումներուն մէջ կ'իյնան նաեւ «Մարմին Տէրունական»ը եւ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»ը, որոնք կրնան Շնորհալիի գրիչէն ելած ըլլալ:

ՍՐԲԱՍԱԳՈՒԹԻՒՆ

«Մարմին Տէրունական» երգէն անմիջապէս ետք, Սարկաւազը կը ձայնէ՝ «Դպիրներ, Սաղմոն երգեցէք մեր Տէր Աստուծոյն. քաղցր ձայնով հոգեւոր երգեր երգեցէք» («Սաղմոն ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպիրք, ձայնի քաղցրութեան՝ զերգս հոգեւորս»): Եւ «դպիրները օրուան խորհուրդին համաձայն Սրբասացութիւն կ'երգեն, իսկ Սարկաւագները վեր՝ սուրբ Սեղան կը բերեն սրբազան Հացը եւ անմահութեան Բաժակը»:

Խորհրդատետրէն քաղուած այս բացատրականը որոշապէս մեզի կ'ըսէ՝ թէ՛ դպիրները այստեղ Սրբասացութիւն կ'երգեն՝ «օրուան խորհուրդին համաձայն»: Անցեալին, եւ տակաւին 12րդ դարուն՝ Լամբրոնացիի քով եւ 13րդ դարուն՝ Արճիշեցիի քով ալ, կայ միայն մէկ Սրբասացութիւն, որ կը կոչուի «Որք զքրովբէից», եւ որ Ս. Յովհան Ոսկեբերանի Պատարագէն կու գայ:

Բայց, 13րդ դարէն ետք եկող Պատարագամատոյցներուն մէջ կը գտնենք նոր սրբասացութիւններ, որոնք հեղինակութիւնն են 12րդ դարու մեր մեծագոյն մատենագրին եւ երաժիշտ հայրապետին՝ Ս. Ներսէս Շնորհալիի, յօրինուած՝ տօնական զանազան առիթներու համար, ինչպէս՝ «Հրեշտակային»ը (սովորական Կիրակիներուն, Եկեղեցւոյ տօներուն, Ծաղկազարդին եւ Հրեշտակաց տօնին համար), «Ով է որպէս»ը (Յինանց շրջանին եւ Խաչի տօներուն համար), «Բազմութիւնք հրեշտակաց»ը (Ծննդեան, Աւետման, Վարդավառի եւ Աստուածածնայ տօներուն համար), «Սրբութիւն սրբոց»ը, (Մարտիրոսաց յիշատակներուն համար):

Հետաքրքրական իրողութիւնը այն է, որ թէպէտ «Որք զքրովբէից»ը իր եղանակով միասին հասած է մինչեւ մեր օրերը, բայց արդէն դադրած ենք զայն կատարելէ, եւ միայն Շնորհալի Հայրապետին յօրինածները կը գործածենք:

Յիշեալ երգերը «սրբասացութիւն» կը կոչուին, որովհետեւ բոլորն ալ, («Որք զքրովբէիցն»ին նմանողութեամբ) կ'ակնարկեն Եսայի մարգարէի տեսիլքին, ուր սերովբէները Աստուծոյ շուրջը կանգնած եւ իրենց դէմքերը թեւսքողած՝ անդադար կ'երգեն. «Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր Զօրութեանց» (Ես 6.13), եւ կ'աւարտին սերովբէներու արտաբերած նոյն այս բառերով:

(Շարունակելի 8)
«ՀԱՍՎԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ»
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ,
ԿԱՌՈՅՑԸ, ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆԸ
ԶԱՐԵՎ ԱՐՔ. ԱԶՆԱՌՐԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ՝ ՕՐԷՆՔ

ՅԻՍՈՒՍ ԻՐ ՔԱՐՈՉՈՒԹԵԱՄԲ ԻՆՉՊԻՍԻՒՒՄ ԲԱՆԵՐ ՍՈՐՎԵՑՈՒՑ:
Յիսուս մարդուն սորվեցուց Աստուծոյ, իր ընկերոջ եւ իր անձին հանդէպ ունեցած պարտաւորութիւնները, որոնք կ'ամփոփուին բնական եւ դրական օրէնքներու մէջ:

ՈՐՆ Է ԲՆԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ:

Խղճմտանքն է բնական օրէնքը:

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ ԽՂՃՄՏԱՆՔԸ «ՕՐԷՆՔ» ԿՐ ԿՈՉՈՒՑ:

Որովհետեւ ամէն բանէ առաջ խիղճն է մարդու բարին ու չարը սորվեցնողը:

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՆ ԿՐ ԿՈՉՈՒՑ:

Խիղճը «բնական օրէնք» կը կոչուի, որովհետեւ մարդկային հոգիին սկզբնական մէկ զօրութիւնն է:

ԻՆՉ ԿՐ ՀԱՍՎԱՆՔ ԱՅՍՊԵՍ ԸՍԵԼՈՎ:

Այս խօսքով կը հասկնանք, թէ խղճի օրէնքը մարդու բնութեան մաս կը կազմէ իր ծնած իսկ օրէն, եւ ոչ թէ անելի ուշ վարժութեամբ ձեռք կը ձգուի:

ԻՆՉ ԿՐ ՍՈՐՎԻՆՔ ԲՆԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ:

Բնական օրէնքէն երկու բան կը սորվինք. առաջին՝ ընել ուրիշին այն բանը, զոր կ'ուզենք ուրիշը մեզի ընէ. երկրորդ՝ չընել ուրիշին այն բանը, զոր չենք ուզեր, որ ուրիշը մեզի ընէ:

ՈՐՆ Է ԴՐԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ:

Դրական օրէնքը տասնաբանեայ պատուիրաններն են, զորս Քրիստոս վերստին հաստատեց:

ԱՅՍ ՕՐԷՆՔՆԵՐԸ ԶԱՏ ՅԻՍՈՒՍ ՈՒՐԻՇ ԻՆՉ ՍՈՐՎԵՑՈՒՑ:

Այս օրէնքներէն զատ Յիսուս մեզի սորվեցուց նաեւ սիրել մեր ընկերը՝ մեր անձին պէս, եւ բարիք ընել նոյնիսկ մեր թշնամիներուն՝ մեզ ստողներուն:

ՅԻՍՈՒՍ ԳԼԽԱՒՈՐԱՊԵՍ ԻՆՉ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐ

աւանդեց: Յիսուս նաեւ պատուիրեց մեղքերէ հեռու կենալ, սուտ չխօսիլ, ուրիշներուն չարիք չընել, եւ միշտ Աստուծոյ աղօթել, որպէսզի փորձութեան մէջ չիյնանք:

A PRAYER FOR JUSTICE Psalm 10

Why are you so far away, O Lord?
Why do you hide yourself when we are in trouble?
The wicked are proud and persecute the poor;
catch them in the traps they have made.
The wicked are proud of their evil desires;
the greedy curse and reject the Lord.
The wicked do not care about the Lord;
in their pride they think that God doesn't matter.
The wicked succeed in everything.
They cannot understand God's judgments;
they sneer at their enemies.
They say to themselves, "We will never fail;
we will never be in trouble."
Their speech is filled with curses, lies, and threats;
they are quick to speak hateful, evil words.
They hide themselves in the villages,
waiting to murder innocent people.
They spy on their helpless victims;
they wait in their hiding place like lions.
They lie in wait for the poor;
they catch them in their traps and drag them away.
The helpless victims lie crushed;
brute strength has defeated them.
The wicked say to themselves, "God doesn't care!
He has closed his eyes and will never see me!"
O Lord, punish those wicked people!
Remember those who are suffering!
How can the wicked despise God
and say to themselves, "He will not punish me"?
But you do see; you take notice of trouble and suffering
and are always ready to help.
The helpless commit themselves to you;
you have always helped the needy.
Break the power of wicked and evil people;
punish them for the wrong they have done
until they do it no more.
The Lord is king forever and ever.
Those who worship other gods
will vanish from his land.
You will listen, O Lord, to the prayers of the lowly;
you will give them courage.
You will hear the cries of the oppressed and the orphans;
you will judge in their favor,
so that mortal men may cause terror no more.





ՆԻԿԻՅՑ ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎԻ 1700-ԱՄԵԱԿ

«ՀԱՒԱՏԱՄՔ ԵՒ Ի ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ, ՅԱՆԵՂՆ ԵՒ Ի ԿԱՏԱՐԵԱԼ»:

1. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ:

Աստուածաշունչը կ'ուսուցանե, թե Սուրբ Հոգին Աստուած մէկն է Ամենասուրբ Երրորդութենէն (Մտ 28.19: Բ. Կր13.13):

Նիկիական Հանգանակին մէջ սկզբնապէս ռեւէ բան չկար Սուրբ Հոգին մասին: 4-րդ դարուն, երբ Արիոս Աղեքսանդրացի եւ Կոստանդնուպոլսոյ պատրիարք Մակեդոն ուրացան Սուրբ Հոգին աստուածութիւնը եւ զայն «արարած» համարեցին, 381 թ. գումարուեցաւ Կոստանդնուպոլսոյ ժողովը, որ Տիեզերական 2-րդ ժողով կը կոչենք: Հոն հասարած 150 հայրապետներ դատապարտեցին Մակեդոնը, զօրեղապէս հերքելով անոր մոլորութիւնը:

2. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԲՂԵՆՈՒՄԸ ՀՕՐՄԵՆ:

Քրիստոս Սուրբ Հոգին համար ըսաւ, «Որ Հօրմէն կ'ելլէ» (Յի 15.26): Նոր Կտակարանը երբ կը խօսի Հօրը եւ Սուրբ Հոգին առնչութեան մասին, այսինքն՝ անոնց ներքին կապին մասին, կը գործածէ «ելում» բառը, իսկ աստուածաբանական գրականութիւնը աւելի յաճախ կ'օգտագործէ «բղխում» բառը:

ա) Այս բղխումը առաջին հերթին կը նշէ Սուրբ Հոգին սկիզբը Հօրմէն, ընդգծելու համար նոյնութիւնը Հօրը եւ Հոգին իրական կամ բնութեան:

բ) Այս բղխումը արդիւրի պատկերին ընդմէջէն մեզի ցոյց կու տայ Սուրբ Հոգին շարունակական բղխումը կամ արտահոսումը Հօրմէն, ինչ որ միաժամանակ կը նշէ անհատ եւ անբաժանելի ըլլալը անկէ:

գ) Այս բղխումը ցոյց կու տայ, որ Սուրբ Երրորդութեան գործունէութեան մէջ երեք անձերուն ալ գործը նոյնն է:

3. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՏՈՒԱԾ, «ԱՆԵՂ ԵՒ ԿԱՏԱՐԵԱԼ»:

Արիոսի եւ Կոստանդնուպոլսոյ պատրիարք Մակեդոնի մոլորութեան դէմ, Կոստանդնուպոլսոյ Տիեզերական ժողովը Հաւատամքին մէջ շեշտեց՝ թէ Սուրբ Հոգին «անեղ» է, այսինքն «եղած չէ», ստեղծուած մը չէ, արարած մը չէ: Բայց նոյն բառը ինքնաբերաբար կը հաստատէ, թէ Սուրբ Հոգին ինքնագոյ է, եւ հետեաբար՝ արարիչ է եւ ստեղծող, ինչ որ կը նշանակէ՝ թէ Աստուած է:

Աստուածաշունչը ինք «Աստուած» կը կոչէ Սուրբ Հոգին (Հմմտ Բ. Թգ 23.1-3: Գրծ 5.3-4: Ա. Կր 3.16, 12.4-7): Սուրբ Հոգին աստուածութեան մասին կը վկայեն նաեւ իրեն տրուած ստորագրելիները կամ յատկութիւնները.- Ամենակարող, ամենագէտ, անսահման: Այս յատկութիւնները անխալ կերպով ցոյց կու տան, թէ Սուրբ Հոգին արարած մը չէ, այլ՝ Աստուծոյ էութեան հաղորդակից, անոր բնութենակից եւ աստուածային փառքին ու կամքին, կարողութեան ու զօրութեան, ստեղծագործութեան ու նախախնամութեան ամբողջապէս բաժնեկից անձաւոր էակն է, մէկը անբաժանելի Սուրբ Երրորդութենէն:

Սուրբ Հոգին աստուածութեան մասին կը վկայեն նաեւ իրեն վերագրուած աստուածային գործերը, որոնք արարածի յատուկ չեն: Անկախ արարիչ է, նախախնամող է, հրաշագործ է: Ինքն է որ կը ներշնչէ մարգարէները եւ կը խօսի անոնց բերնով: Կ'օժէ, կ'առաքէ եւ կ'առաջնորդէ Մեսիան (Քրիստոս): Կը կառավարէ Եկեղեցին եւ անոր պաշտօնեաները: Կը սրբէ, կը լուսարեւի, կ'արդարացնէ հաւատացեալները: Ծնորիքներ կը բաշխէ բոլոր հաւատացեալներուն, մեր քրիստոնէական կեանքը ուղղելու եւ Եկեղեցոյ ընդհանուր բարիքին ծառայեցնելու համար: Աստուծոյ սիրով կը լեցնէ մեզ եւ սիրոյ կեանքը կարելի կը դարձնէ մեզի համար: Ի վերջոյ, Սուրբ Հոգին աստուածութեան մեծագոյն վկայութիւնը Քրիստոսի ինք կու տայ (Մտ 12.31-32):

4. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԿԱՏԱՐԵԱԼ ԱՆՁՆԱՌՐՈՒԹԻՒՆԸ:

Սուրբ Հոգին աստուածութիւնը ուրացողները կը մերժէին նաեւ անոր կատարելութիւնը. այսինքն՝ կը մերժէին Սուրբ Հոգին ճանչնալ իբրեւ անձ, եւ (այսօրուան Եհովայի Վկաներուն պէս) զայն կը համարէին պարզապէս աստուածային ոյժ մը կամ զօրութիւն մը, եւ ոչ թէ անձ մը:

Բայց Աստուածաշունչը մեզի ցոյց կու տայ, թէ Սուրբ Հոգին բանական եւ գիտակից անձ մըն է: Բանականութենէ եւ ինքնութենէ զուրկ պարզ «զօրութիւն» մը ինչպէս կրնայ խօսիլ տալ առաքելներուն (Գրծ 2.4), ինչպէս կրնայ խորհիլ (Հո 8.27), կամ խօսիլ (Մտ 10.19-20), առաջնորդել մարդիկը կամ Եկեղեցին (Յի 16.13), մխիթարել ու յանդիմանել (Յի 16.8), տրամիլ (Եփ 4.30), քննել մարդոց մտածումները եւ Աստուծոյ խորհուրդները (Ա. Կր 2.10-11), եւ բարեխօս ըլլալ մեզի համար (Հո 8.26-27): Ասոնք անառարկելի կերպով ցոյց կու տան, թէ Սուրբ Հոգին կատարեալ անձնատրութիւն մըն է:

5. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՌԻՍՈՒՑԻՉԸ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԸ ԵԿԵՂԵՑՑԻՈՅ:

Ինչպէս Քրիստոս ինք ըսաւ, Սուրբ Հոգին ինքն է ուսուցիչը Եկեղեցոյ, որ ոչ միայն մնայուն կերպով կը յիշեցնէ եւ բոլոր ժամանակներուն համար կը նորոգէ կամ կը թարմացնէ Քրիստոսի ուսուցումները, այլ նաեւ կը բացայայտէ (Յի 14.25-26): Ինքն է որ կը մատակարարէ եւ կը բաւարարէ Եկեղեցոյ կեանքին հիմնական կարիքները՝ վարդապետական, ծիսական ու վարչական երեսներուն մէջ, ինչպէս նաեւ ընդհանուր Եկեղեցոյ թէ անհատ հաւատացեալներու հոգեւոր կեանքին աճումն ու յաճախութեամբ շնորհներու մատակարարումով (Ա. Կր 12.4-11 եւ 13):

Իրմով է որ վերստին կը ծնինք Աստուծոյ համար (Յի 3.6-8): Իրմով է որ քրիստոնէական կեանք մը Սուրբ Հոգին պարգեւած նորոգութեամբ կը յատկանշուի (Յի 6.63: Գղ 3.23), եւ Սուրբ Հոգիով կարելի կը դառնայ, կ'ամրապնդուի ու հաստատուն կը մնայ (Բ. Կր 1.21-22: Եփ 3.14-17): Իրմով է որ ներում կը գտնենք մեր մեղքերուն (Յի 20.22), եւ ձեռք կը բերենք Աստուծոյ պարգեւած ազատութիւնը եւ արդարութիւնը (Բ. Կր 3.9 եւ 17-18), մեր վրայ կ'առնենք Աստուծոյ սպառազինութիւնը (Եփ 6.11-17), կամաց-կամաց ձերբազատուելով մարդկային մեղաւոր գործերէն եւ հասնելով առաքինի կեանքի մը զեղեցիկ արդիւնքին (Հո 8.9-17: Գղ 5.16-25): Իրմով է որ Աստուծոյ տաճար եւ բնակարան կը դառնանք (Յի 14.15-17 եւ 23: Հմմտ Ա. Պտ 4.14), եւ աստիճանաբար կը փոխակերպուինք, պատրաստուելով ապագայ ամբողջական պայծառակերպութեան (Բ. Կր 5.4-5):

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՒԱՏԱՄՔԻՆ
Չարեհ Արք. Ազնաւորեան
(Շարունակելի 11)

THE BOOK OF SONGS OF SONGS

WRITTEN: PROBABLY BETWEEN 400 AND 100BC, BUT COULD BE MUCH EARLIER

WHAT YOU NEED TO KNOW:

This book is very different from other books of the Bible! Song of Songs is a series of love poems written as a celebration of human love between a man and a woman. As the book goes on, their love grows stronger, and the poems are full of word-pictures that describes their sexual relationship. This book was considered so rude that, in ancient Israel, men weren't allowed to read it until they were 30.

WHY READ IT?

This book is a demonstration of how being in love, in a God-honouring relationship, can enhance your relationship with God. It also shows that romantic relationships are not to be entered into lightly. The name 'Song of Songs' means 'the greatest song', which emphasises that these relationships are very special and need to be taken seriously.

SONGS OF SONGS
COULD HAVE BEEN
WRITTEN ANYTIME
BETWEEN 900 AND
100BC

THE LETTERS 1 JOHN


WRITTEN: AD90s

WHAT YOU NEED TO KNOW:

This is the first three letters written by a man called John. In this letter, John can't stop talking about how God is love and how we should love each other. It sums up the whole story of the gospel – God loved his people so much that he sent Jesus to die for them.

WHY READ IT?

The central theme of this letter is love. It explores a key character trait of God and challenges us about how much love we live out practically. It also reminds us that, as Jesus said, we live in the world but do not 'belong to the world' (see John 17.11-16). It encourages us to remember to live our lives as followers of Jesus.



ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՑԻՑ
ՎԱՆԱԿԱՆԻ
ՄԱՏԵԱՆ ՈՂԵՐԳՈՒԹԵԱՆ
ԳՐԻՉ՝ ՄԱՅԵԱՂ ՆՈՎԱՅ

Հովանաւորութեամբ
Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեհի
«Մատենա Ողբերգութեան»
Հատորի Շնորհանդէս

ՀՐԱՒԷՐ

Երկուշաբթի, 9 Փետրուար 2026-ին
Երեկոյեան ժամը 7-ին
Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի

Սիրով կը հրատարակուի հաւատացեալ մեր ժողովուրդը ներկայ գտնուելու Սայեաղ Նովայի կողմ, ընդօրինակուած Սուրբ Գրիգոր Նարեկացիի «Մատենա Ողբերգութեան» նմանատիպ հատորի շնորհանդէսին:

Դիան Ազգային Առաջնորդարանի